ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1951 *Общественные науки*

Ա. ԳԱՆՋՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ-Ի «ՏԵՂԵԿԱԳՐԻ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Նախագահությունը իր 1951 թ. օգոստոսի 15-ի նիստում քննության առավ «Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Տեղեկագրի» (Հասարակական գիտություններ) վերաբերյալ «Կոմունիստ» թերթի 1951 թ. հուլիսի 22-ի համարում հրատարակված հոդվածը։

Նախագահությունը նշեց, որ «Կոմունիստ» թերթի 1951 թ. հուլիսի 22-ի համարում տպագրված «Սովետական գրականության կենսական խնդիրներից հեռու» հոդվածը ճիշտ է արձանագրում «Տեղեկագրի» աշխատանքներում գոյություն ունեցող թերությունները։ «Տեղեկագիրը» բիչ ուշադրություն է նվիրում սովետական գրականության հարցերին։ Վերջին մեկ և կես տարվա ընթացքում «Տեղեկագրում» տպագրվել է միայն մի քանի հոդված՝ նվիրված սովետահայ գրողների ստեղծագործությանը։ Տպագրված այդ հոդվածների զգալի մասը (Հ. Մուրադյան— «Գուրգեն Բորյան», Ռ. Նանումյան— «Թաթուլ Հուրյան», Գ. Գրիգորյան— «Մադաթ Պետրոսյան») աչքի չեն ընկնում գիտական բարձր մակարդակով, չեն պարունակում խորը տեսական ընդհանրացումներ և գերազանցապես կրում են նկարագրական բնույթ։

Նախագահությունը սխալ համարեց այդ հոդվածների հրապարակումը «Տեղեկագրում»՝ առանց խմբագրական լուրջ մշակման, միաժամանակ արձանագրեց, որ Գրականության ինստիտուտի ղեկավարությունը սխալ է վարվել տեսականորեն թույլ հոդվածները հանձնարարելով տպագրության։

«Տեղեկագրի» էջերում՝ սովետահայ գրականության մասին տպագրված հոդվածների քանակը և նրանց ցածր մակարդակը վկայում է այն մասին, որ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի սովետական գրականության սեկտորը դեռևս անբավարար է աշխատում, համալրված չէ անհրաժեշտ թվով բարձրորակ գիտական աշխատողներով։ Ինստիտուտի դիրեկցիան և սեկտորի ղեկավարությունը պահանջկոտ վերաբերմունք չեն ցուցաբերում աշխատակիցների գրական արտադրանքի որակի նկատմամբ։

Գիտությունների ակադեմիայի Նախագահությունը նշեց մի շարք կոնկրետ միջոցառումներ գոյություն ունեցող թերությունները վերացնելու համար։

Նախագահությունը առաջարկեց «Տեղեկագրի» խմբագրությանը՝ ավելի մեծ ուշադրություն դարձնել սովետական գրականության խնդիրներին, սիստեմատիկաբար հրատարակել այնպիսի հոդվածներ, որոնք մարքս-լենինյան մեթոդոլոգիայի դիրքերից առաջ քաշեն և լուծեն սովետահայ գրականության վերելքի հետ կապված ակտուալ հարցերը։

Խմբագրությունը պետք է խստապահանջ լինի տպագրվող հոդվածների որակի նկատմամբ, կատարի խստագույն ընտրություն, մերժելով այն հոդվածները, որոնք չունեն տեսական բարձր մակարդակ, շարադրված չեն լավ լեզվով։

Նախագահությունը Գրականության ինստիտուտի ղեկավարության ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ պետք է սովետական գրականության սեկտորն ուժեղացնել բարձրորակ աշխատակիցներով, խնամքով քննել տպագրության համար հանձնարարվող աշխատությունները, այս գործում բացառելով նեխած լիբերալիզմի, անսկզբունք բարեկամական հարաբերությունների ամեն մի դրսևորման հնարավորությունը։

Նախագահությունը առաջարկեց Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Հասարակական գիտությունների բաժանմունքի բոլոր գիտա-հետազոտական հիմնարկների ղեկավարներին՝ ուժեղացնել խմբագրական-հրատարակչական խորհուրդների աշխատանքը, կտրականապես հրաժարվելով «Տեղեկագրի» խմբագրությանը թույլ, լրիվ չմշակված հոդվածներ ուղարկելուց, մերժելով այն անթույլատրելի պրակտիկան, երբ «Տեղեկագրում» հրատարակվելու համար ուղարկվող հոդվածներին անսկզբունք նկատառումներով տրվում է երկիմաստ, ոչ օբյեկտիվ, այս կամ այն հեղինակին «չվիրավորելու» ցանկությամբ թելադրված կարծիքներ։